



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • I Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia

(+374 60) 71-00-92, info@armin.am, www.armin.am, www.yసు.am

№ 1/2016-2017 « 18» հունվար 2016 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №1/2016

**ԵՂՀ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ՝
2016Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 18-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ**

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 27 (քսանյոթ) անդամներից 24-ը (քսանչորս):

Նիստը նախագահում էր ռեկտոր, ՀՀԻ տնօրեն Ա. Հ. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1.2015-16 ուստարվա ՀՀԻ գործունեության ծրագրի կատարողականի հաստատում (զեկ. փոխտնօրեն Մ. Ս. Հովհաննիսյան):

2. 2016-17 ուստարվա ՀՀԻ գործունեության ծրագրի հաստատում (զեկ. փոխտնօրեն Մ. Ս. Հովհաննիսյան):

3.Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. **Լսեցին.** 2015-16 ուստարվա ՀՀԻ գործունեության ծրագրի կատարողականը հաստատելու մասին: Փոխտնօրեն Մ. Ս. Հովհաննիսյանը ներկայացրեց կատարողականը: Հարցեր չհնչեցին:

Որոշեցին. - Հաստատել 2015-16 ուստարվա ՀՀԻ գործունեության ծրագրի կատարողականը:

2. **Լսեցին.** – 2016-17 ուստարվա ՀՀԻ գործունեության ծրագրի հաստատման մասին: Փոխտնօրեն Մ. Ս. Հովհաննիսյանը, ներկայացնելով ՀՀԻ հետազոտական և կրթական ծրագրերը, մասնավորապես, նշեց նախորդ ուստարվա ծրագրի համեմատ տեղ գտնելիք փոփոխությունները: Հարցեր չհնչեցին:

Որոշեցին. - Հաստատել 2016-17 ուստարվա ՀՀԻ գործունեության ծրագիրը:

Ընթացիկ հարցեր.

Լսեցին. – ՀՀԻ հայ-վրացական հարաբերությունների բաժնի ավագ գիտ. աշխատող, պ.գ.դ. Վանիկ Հրանտի Վիրաբյանի «Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները 1918-1921թթ.» աշխատանքը և 2015 թ. դեկտեմբերի 1-ին Երևանի պետական համալսարանում

կայացած ԵՊՀ Ռազմավարական հետազոտությունների ԳՀ լաբորատորիայի կազմակերպած «Արցախ. նորագույն պատմության խնդրականները» հանրապետական գիտաժողովին ներկայացված հոդվածների ժողովածուի հրատարակության երաշխավորելու մասին: Ռեկտոր, ՀՀԻ տնօրեն Ա. Ն. Միմոնյանն ասաց, որ Վ. Վիրաբյանի մենագրության հարցի շուրջ առկա է ՀՀԻ հրատարակչական հանձնախմբի դրական եզրակացությունը, իսկ ԵՊՀ Ռազմավարական հետազոտությունների ԳՀ լաբորատորիայի կազմակերպած գիտաժողովի հոդվածների ժողովածուի վերաբերյալ նա ընդհանուր առմամբ դրական կարծիք հայտնելով՝ առաջարկեց դրական ընթացք տալ ՀՀԻ հայ-վրացական հարաբերությունների բաժնի և ԵՊՀ Ռազմավարական հետազոտությունների ԳՀ լաբորատորիայի միջնորդություններին:

Որոշեցին. – ՀՀԻ հայ-վրացական հարաբերությունների բաժնի ավագ գիտ. աշխատող, պ.գ.դ. Վանիկ Հրանտի Վիրաբյանի «Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները 1918-1921թթ.» աշխատանքը և 2015 թ. դեկտեմբերի 1-ին Երևանի պետական համալսարանում կայացած ԵՊՀ Ռազմավարական հետազոտությունների ԳՀ լաբորատորիայի կազմակերպած «Արցախ. նորագույն պատմության խնդրականները» հանրապետական գիտաժողովին ներկայացված հոդվածների ժողովածուն երաշխավորել տպագրության:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Ն. Միմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ս. Հովհաննիսյան

18.01.2016թ.

Վ. Տ.